Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հայցվորի կողմից ներկայացված հայցով վճարվել է 80.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումար: Հետևաբար պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-194 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

«Պրոֆ Ալ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ 26.04.2023թ-ին ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգում՝ gnumner.minfin.am ինտերնետային կայքում, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից հրապարակված ծանուցումը՝ 19.12.2022թ-ին կնքված ապրանքի մատակարարման թիվ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/1-3 պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու և «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության gnumner.kanach@yerevan.am էլեկտրոնային փոստից 11.05.2023թ-ին «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին ուղարկված և ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Ավանեսյանին ուղղված Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Լ. Հովհաննիսյանի գրությունը՝ «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ն.ԱՎԵՏԻՍՅԱՆ